ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ
Միջազգային գիտական պարբերական
ISSN 2579-2822

doi: 10.52276/25792822-2024.1-79

ՀՏԴ 636.323/.324.083.37

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՍԱՆՐԲԱԳԵՂՄ ԿՈՐԻԴԵԼԻ ՏԻՊԻ ԳԱՌՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՄԻՆՉԵՎ ՄՈՐԻՑ ԱՆՁԱՏԵԼԸ

Զ.Ս. Փամբուխչյան *գ.գ.թ.*, **Յու.Գ. Մարմարյան** *գ.գ.դ.*
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
zorik-61@mail.ru, yu.marmaryan@anau.am

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝
գառ,
կենդանի զանգված,
կերաբաժին,
նորածին,
քաշաճ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտություններով հիմնավորվել է, որ մատղաշի աճը հիմնականում պայմանավորված է հղիության երկրորդ շրջանում մաքիների կերակրման, խնամքի և պահվածքի պայմաններով: Մաքիների կերաբաժնում կերի էներգետիկ արժեքը կազմում է 1,92 կՋ: Բուծարանային գիրություն (կոնդիցիա) ունեցող մաքիներից ծնվում են առույգ, բարձր կենդանի զանգվածով գառներ, որոնց հետագա աճի ինտենսիվությունն ապահովում է բարձր քաշաճ: Ինչպես 2,5 ամսականում, այնպես էլ մորից անջատելիս գառներն ունենում են բավարար կենդանի զանգված: Առաջարկվում է հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի ոչխարները բուծել մաքուր բուծման մեթոդով և հնարավորության սահմաններում վաճառել շահագրգիռ ֆերմերներին:

Նախաբան

Ոչխարաբուծությունը գյուղատնտեսության, մասնավորապես անասնաբուծության առաջատար ճյուղերից է. անասնաբուծական մթերքի արտադրության 10,5 %-ը բաժին է ընկնում ոչխարաբուծությանը: Ոչխարի միսը և կաթը մարդկանց սպառողական զամբյուղի կարևոր սննդամթերքներից են, իսկ ոչխարենուց պատրաստված հագուստը և բրդյա գործվածքները լայն պահանջարկ ունեն:

Ոչխարը արոտային կենդանի է, և ուշագրավ է, որ, ի տարբերություն գյուղատնտեսական այլ բուսակեր կենդանիների՝ ձիերի ու տավարի, գլխի կառուցվածքի, շարժուն շրթունքների և սուր կտրիչների շնորհիվ կարողանում է ուտել անգամ ցածրաճ բույսերը, թափված սերմերն ու տերևները (В.П. Пестис и др., 2009): Ընդ որում՝ 800 տարատեսակ բույսերից ոչխարը ուտում է 520-ը, ձին՝ 416-ը, իսկ տավարը՝ 460-ը: Արտակազմվածքի շնորհիվ (ամուր ոտքեր, պինդ կճղակներ) ոչխարը կարողանում է երկար քայլել. 24 ժամում կարող է անցնել 30-35 կմ տարածք: Բացի այդ՝ ոչխարի արտաթորանքը պարարտացնում է արոտը՝ բարելավելով այն (Լ.Գ. Վարդևանյան, 2007, Յու.Գ. Մարմարյան և ուրիշ., 2001):

Անասնաբուծությունում, մասնավորապես ոչխարաբուծությունում արդյունաբերական տեխնոլոգիաների կիրառումը պետք է լինի ոչ միայն տնտեսապես մատչելի, այլև կենսաբանորեն նպատակահարմար և արդարացված: Տեխնոլոգիական նորագույն մեթոդների ներդրումն արտադրությունում հնարավորություն է տալիս ինտենսիվացնել ճյուղը՝ բարձրացնելով կենդանիների արտադրական պոտենցիալը: Ուստի խնդիր է դրվել բարձրացնել ոչխարների մթերատվությունն ու որակական կազմը:

խոշոր, առողջ և կենսունակ գառներ ստանալու համար անհրաժեշտ է հետևել, որ սերմնավորումից մինչև ծինը մաքիների բուծարանային գիրությունը (կոնդիցիան) չնվազի: Հյուծված հղի մայրերից ծնվում են մանր, ոչ կենսունակ գառներ: Ծնից հետո էլ հյուծված մայրերը կաթ չեն ունենում գառներին նորմալ կերակրելու համար, ինչի հետևանքով գառները լինում են թերսնված, վատ են աճում, հիվանդանում են, բարձրանում է անկումների տոկոսային հարաբերակցությունը:

Նյութը և մեթոդները

Փորձերն իրականացվել են 2020-2023 թվականներին ՀԱԱՀ Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսության ոչխարաբուծական ֆերմայում: Պլանավորվել է ոչխարների ծինն անցկացնել հունվար-փետրվար ամիսներին (ուշ ձմեռային-վաղ գարնանային ծին): Հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի գառների կենդանի զանգվածի դինամիկ փոփոխության ուսումնասիրությունն իրականացվել է կշռային մեթոդով: Նորածինների կշռումները կատարվել են ծնվելու հաջորդ օրը: 2,5 և 5 ամսական գառները կշռվել են վաղ առավոտյան՝ պայմանական քաղցած վիճակում, 0,5 կգ ճշտգրությամբ:

Գառների կերաբաժինը կազմվել է ոչխարների համար նախատեսված կերակրման նորմատիվներով:

Արդյունքները և վերլուծությունը

Հաշվի առնելով, որ մաքիները պետք է ունենան բուծարանային գիրություն և առաջնորդվելով ոչխարների կերակրման նորմերով՝ տարբեր սեռատարիքային խմբերի համար կազմվել է օրինակելի կերաբաժին (Լ.Գ. Վարդևանյան, 2007, В.П. Пестис и др., 2009):

Կերաբաժինը (աղ. 1) կազմելիս հաշվի է առնվել կերում միկրո- և մակրոտարրերի պարունակությունը: Կերի լիարժեքությունն ու սննդարարությունը որոշվել են ՀԱԱՀ մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի լաբորատորիայում: Հարկ է նշել, որ մաքիների կենդանի զանգվածի կորուստը մսուրային շրջանում նվազեցնում է նաև գառների աճը ինչպես սաղմնային, այնպես էլ հետսաղմնային՝ կաթով կերակրման շրջաններում:

Ըստ աղյուսակ 2-ի՝ հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի (նկ. 1) նորածին գառների կենդանի զանգվածը բնորոշ է մսաբրդակաթնային ուղղության ցեղերի գառների կենդանի զանգվածին՝ 3,0-4,5 կգ (Б.Б. Траисов и др., 2017, А.А. Омаров, С.И. Гайдашов, 2021):

Տվյալների վերլուծությամբ ակնհայտ է, որ կենդանի զանգվածի տատանումները պայմանավորված են նաև մսուրային շրջանում մաքիների կերակրման, խնամքի և պահվածքի պայմաններով:

Աղյուսակ 1. Մսուրային շրջանի կերաբաժինը*

Սեռատարիքային խմբեր	Ցանովի խոտ, կգ	Բազմամյա խոտ, կգ	Գարու ջարդոն, կգ	Համակցված կեր, կգ	Կերի էներգետիկ արժեքը, կՁ
Խոյեր	1	1,0	0,45	0,5	2,63
Մաքիներ	-	1,5	0,30	0,2	1,92
Շիշակներ	-	1,0	0,30	-	1,04
Խոյիկներ	-	1,5	0,30	-	1,38

Աղյուսակ 2. Հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի նորածին գառների կենդանի զանգվածի դինամիկան ըստ տարիների*

Տարիներ	Գառների սեռը	n	Lim	M ± m	ϑ	C
2020 թ.	Արու	51	3,1-4,4	3,48 ± 0,72	0,36	13,25
	Էգ	49	2,7-3,7	3,40 ± 0,92	0,40	15,34
2021 թ.	Արու	48	3,4-4,5	3,92 ± 0,71	0,38	17,35
	Էգ	52	3,0-4,4	3,41 ± 0,91	0,27	20,30
2022 թ.	Արու	27	2,7-4,5	3,36 ± 0,08	0,45	13,39
	Էգ	21	2,5-3,6	2,19 ± 0,37	0,35	38,70
2023 թ.	Արու	27	3,3-4,4	3,85 ± 0,01	0,19	12,70
	Էգ	23	2,9-3,6	3,20 ± 0,03	0,17	13,40

*Կազմվել է հեղինակների կողմից:

Նկ. 1. Հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի նորածին գառներ (*ՀԱԱՀ Բալահովիտի ՈՒՓ տնտեսություն*):

Նկ. 2. Հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի 2,5 ամսական գառներ՝ մայրերի հետ (*ՀԱԱՀ Բալահովիտի ՈՒՓ տնտեսություն*):

2020 թ. ծնվել է 100 գառ: Արուների կենդանի զանգվածը կազմել է 3,48±0,72 կգ, էգերինը՝ 3,40±0,92 կգ:

2021 թ. ծնվել է 100 գառ: Արուների կենդանի զանգվածը կազմել է 3,92±0,71 կգ, էգերինը՝ 3,41±0,92 կգ: Հետագայում ոչխարների (մաքիների) գլխաքանակը նվազել է՝ 2022 և 2023 թթ. կազմելով մոտ 45 գլուխ: Ծնված գառների գլխաքանակը այդ տարիներին կազմել է համապատասխանաբար 48 և 50 գլուխ, արուների կենդանի զանգվածը՝ 3,36 կգ, էգերինը՝ 3,19 կգ, իսկ 2023 թվականին՝ համապատասխանաբար 3,85 և 3,20 կգ (Б.Б. Траисов и др., 2017, А.И. Ерохин, 2001, А.И. Ерохин, С.А. Ерохин, 2014):

2,5 ամսական գառների կշռման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում: Ըստ տարիների՝ 2,5 ամսական գառների (նկ. 2) միջին կենդանի զանգվածը կազմել է՝ արուներինը՝ 17,0-20,51 կգ, էգերինը՝ 15,10-18,13 կգ: Ստացված տվյալների համաձայն՝ գառները ծնված օրվանից մինչև 2,5 ամսականն ինտենսիվ են աճում՝ մեկ օրում 200-220 գ, ինչը բնորոշ է մսաբրդակաթնային ուղղության ցեղերի գառներին (Б.Б. Траисов и др., 2017, А.А. Омаров, С.И. Гайдашов, 2021, www.agrostory.com):

2020-2023 թթ. նույն ժամանակահատվածում ուսումնասիրվել է նաև 5 ամսական գառների կենդանի զանգվածը: Ուսումնասիրության արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 3. Հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի 2,5 ամսական գառների կենդանի զանգվածի դինամիկան ըստ տարիների*

Տարիներ	Գառների սեռը	n	Lim	M ± m	ð	C
2020	Արու	49	12-27	17,0 ± 0,52	4,62	19,21
	Էգ	47	11-27	15,1 ± 0,40	3,47	18,32
2021	Արու	49	13-29	19,6 ± 0,37	4,65	23,95
	Էգ	46	11-26	16,5 ± 0,27	3,58	20,19
2022	Արու	24	13-29	19,3 ± 0,35	3,96	19,75
	Էգ	21	12-27	16,7 ± 0,29	3,33	17,97
2023	Արու	23	13-22	20,51± 0,40	4,70	22,90
	Էգ	25	12- 20	18,13± 0,20	3,38	18,64

Աղյուսակ 4. Հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի 5 ամսական գառների կենդանի զանգվածի դինամիկան ըստ տարիների*

Տարիներ	Գառների սեռը	n	Lim	M ± m	ð	C
2020	Արու	48	23-38	31,20 ± 0,48	3,97	12,45
	Էգ	45	20-35	27,13 ± 0,43	3,62	13,46
2021	Արու	49	22-38	30,7 ± 0,60	3,74	11,58
	Էգ	46	21-36	28,6 ± 0,68	3,77	12,60
2022	Արու	27	23-37	30,7 ± 0,40	3,53	10,29
	Էգ	22	24-36	28,6 ± 0,38	3,79	13,42
2023	Արու	20	29-40	33,20 ± 0,79	3,56	10,72
	Էգ	25	25-40	30,22 ± 0,77	3,86	12,77

*Կազմվել է հեղինակների կողմից:

Տվյալների կենսաչափական վերլուծության համաձայն՝ 5 ամսական գառների միջին կենդանի զանգվածը տատանվում է 31,20-33,20 կգ, իսկ էգերինը՝ 27,13- 30,22 կգ սահմաններում:

Տվյալների համեմատությամբ ակնհայտ է, որ 2,5 ամսական արու գառների կենդանի զանգվածը 20,51±0,40 կգ է, էգերինը՝ 18,13±0,20 կգ: 2,5-5 ամսականում բացարձակ քաշաճը համապատասխանաբար կազմել է 12,69 և 12,09 կգ (Կ.Ա. Катков и др., 2021, А.И. Ерохин, 2001, А.И. Ерохин, С.А. Ерохин, 2014, А.И. Жигачев и др., 1999):

Նորածին գառների կենդանի զանգվածի (3,85 և 3,20 կգ) համեմատությամբ 2,5 ամսականում արու և էգ գառների բացարձակ քաշաճը կազմել է համապատասխանաբար 16,66 և 14,93 կգ: Ինչպես երևում է, մինչև 2,5 ամսականը գառների աճի ինտենսիվությունն ավելի բարձր է, քան 2,5-5 ամսականում. համապատասխանաբար կազմում է 12,69 և 12,09 կգ, ինչը բնորոշ է մսաբրդակաթնային ուղղության ցեղերի գառներին (Б.Б. Траисов и др., 2017, А.А. Омаров, С.И. Гайдашов, 2021, А.И. Жигачев и др., 1999, К.А. Катков и др., 2021):

Եզրակացություն

Հետազոտությունների արդյունքների համաձայն՝ հայկական կիսանրբագեղմ կորիդելի տիպի գառներն աճի տեմպով համապատասխանում են մսաբրդային, մսաբրդակաթնային ուղղության ցեղերի գառների աճին՝ ապահովում են բարձր քաշաճ: Գառների աճի ինտենսիվությունը պահպանվում է մինչև 2,5 ամսականը: Ուստի առաջարկվում է այս ցեղի ոչխարները բուծել մաքուր բուծման մեթոդով և հնարավորության սահմաններում վաճառել շահագրգիռ ֆերմերներին, ինչպես նաև գլխաքանակի ավելացման դեպքում շրջանացնել Հայաստանի այն շրջաններում, որտեղ նախկինում բուծվել են:

Գրականություն

1. Մարմարյան Յու.Գ. և ուրիշ. Անասնաբուծության հիմունքներ. - Եր., 2001. - էջ 96-130, 151-157:
2. Վարդևանյան Լ.Գ. Գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմատիվներ և կերաբաժիններ. - Եր., 2007. - էջ 157-173:
3. Ерохин А.И. Приусадебное хозяйство. Разведение овец и коз. - М.: изд. ЭКСМО-Пресс, 2001. - С. 11.
4. Ерохин А.И., Ерохин С.А. Овцеводство. Учебник. - Воронеж, 2014. - С. 400-432.
5. Жигачев А.И. и др. Приусадебное хозяйство. Козы. Овцы. - СПб.: Диамант, 1999. - С. 178-211.
6. Катков К.А. и др. Использование комплексного показателя для оценки параметров продуктивности у овец породы российский мясной меринос / К.А. Катков, А.Ю. Криворучко, А.К. Каниболоцкая // Вестник аграрной науки. - 2021. - N 4. - С. 91. http://dx.doi.org/10.17238/issn2587-666x.2021.4.62.
7. Омаров А.А., Гайдашов С.И. Продуктивные показатели овец северокавказской породы и их взаимосвязь с основными селекционируемыми признаками // Вестник Алтайского государственного аграрного университета. - 2021. - N 2. - С. 66-72.
8. Пестис В.П. и др. Кормление сельскохозяйственных животных. - Минск, 2009. - 540 с.
9. Траисов Б.Б. и др. Рост и развитие мясо-шерстных овец разных генотипов // Аграрная наука. - 2017. - N 3. - С. 15-17. http://dx.doi.org/10.52578/2305-9397-2023-1-2-99-107.
10. https://agrostory.com. Животноводство. 7 апреля 2020 г. (դիտվել է՝ 28.09.2023 թ.).

Динамика прироста живой массы ягнят армянских полутонкорунных овец типа корридель перед отъемом

З.С. Памбухчян, Ю.Г. Мармарян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: *живая масса, новорожденный, привес, рацион, ягненок*

Аннотация. Исследования доказали, что рост молодняка в основном определяется условиями кормления, ухода и поведения овцематок во втором периоде беременности. Энергетическая ценность корма в рационе овцематок составляет 1.92 кДж. От овцематок заводской кондиции (упитанности) рождаются энергичные ягнята с высокой живой массой. Интенсивность их дальнейшего роста обеспечивает высокий привес. Как в 2.5 месяца, так и при отъеме ягнята имеют достаточную живую массу. Предлагается применять чистопородное разведение армянских полутонкорунных овец типа корридель и продавать их заинтересованным фермерам.

A Study of Weight Gain Dynamics in Lambs of Armenian Semi-Fine Fleece Sheep in the Corridel Breed before Weaning

Z.S. Pambukchyan, Y.G. Marmaryan

Armenian National Agrarian University

Keywords: *diet, lamb, live weight, newborn, weight*

Abstract. In livestock breeding, particularly in sheep breeding, biotechnology of industrial technology plays an important role. A remarkable characteristic of technology is that it should be economically and biologically suitable. As a result, we are faced with the task of increasing grain yields and qualitative compositions of sheep. Ewes not having enough milk to feed their lambs after birth, result in malnourished lambs that grow poorly. Consequently, they become sick, and the rate of decline increases. Based on the analysis of the data, it appears that the variation in the live mass can also be attributed to ewes feeding, care, and behavior during the manger period. According to the research program, 2.5- and 5-month-old lambs were weighed. 2.5-month-old lambs had an average live weight of 17.0-20.51 kg for males and 15.10-18.13 kg for females. Compared to the live weight of newborn lambs (3.85 kg and 3.20 kg), the absolute weight gain of male and female lambs at 2.5 months was 16.66 kg and 14.93 kg, respectively. Lambs grain weight rapidly from birth to 2.5 months old (200-220 grams per day), which is typical for lambs in this age group. The data shows that lambs up to 2.5 months of age grew more rapidly than lambs 2.5-5 months of age, which was 12.69 kg and 12.09 kg, respectively, which is typical for lambs this age of multi-purpose sheep.

Շահերի հայտարարագիր

Հեղինակները հայտարարում են, որ այս հոդվածի հետազոտության, հեղինակության և/կամ հրապարակման հետ կապված շահերի բախում առկա չէ:

Ընդունվել է՝ 10.01.2024 թ.
Գրախոսվել է՝ 29.02.2024 թ.